

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ
ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**§ 6. ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ: ԵՆԹԱԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ:
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

2. Ենթաբազմություն

Եթե A բազմությունում կա *գոնե* մեկ տարր, որը չի պատկանում B բազմությանը, ապա A -ն *չի հանդիսանում* B -ի ենթաբազմություն՝ $A \not\subset B$:

Օրինակ՝ $2k$, $k \geq 0$, $k \in \mathbb{Z}$ տեսքի թվերի բազմությունը N -ի ենթաբազմություն չէ, քանի որ $0 \notin N$:

A և B բազմությունները հավասար են միայն այն դեպքում, երբ A -ն B -ի ենթաբազմություն է, և B -ն՝ A -ի ենթաբազմություն, այսինքն՝ $A \subset B$ և $B \subset A$:

Երբեմն E բազմության որևէ M ենթաբազմություն առանձնացնելու համար մատնանշվում է M բազմության տարրերին (և միայն դրանց) վերաբերող որևէ p հատկություն (M բազմության տարրերը բնութագրող հատկություն): Այդ դեպքում գրում են՝

$$M = \{x \in E \mid p\},$$

որը նշանակում է՝ *M բազմությունը բաղկացած է E բազմության միայն այն տարրերից, որոնք օժտված են p հատկությամբ:*

Օրինակ,

$$M = \{x \in \mathbb{Q} \mid 0 < x < 1\}$$

գրառումը նշանակում է, որ M -ը 0 -ի և 1 -ի միջև ընկած բոլոր ռացիոնալ թվերի բազմությունն է:

Հնարավոր է, որ E բազմության և ոչ մի տարր օժտված չէ p հատկությամբ: Այդ դեպքում $\{x \in E \mid p\}$ ենթաբազմությունը չի պարունակում E բազմության և ոչ մի տարր և կոչվում է *դատարկ ենթաբազմություն*:

Օրինակ,

$$\{x \in Z \mid 3x = 5\}, \quad \{x \in R_+ \mid x + x^3 = -3\}$$

Ենթաբազմությունները համապատասխանաբար ամբողջ թվերի և դրական իրական թվերի բազմությունների դատարկ ենթաբազմություններ են: